ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 սեպտեմբերի 2024 թվականի N 1404-Ա

ԳՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-24/20 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑ «ՌՈՒԴԻԿ ԱԲՐՈՅԱՆ» Ա/Ձ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով, նկատի ունենալով, որ «Ռուդիկ Աբրոյան» Ա/Ձ-ն մասնակցել է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի բնակավայրերի մանկապարտեզների կարիքների համար անվտանգության տեսախցիկների ձեռքբերման և տեղադրման նպատակով «ԳՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-24/20» ծածկագրով գնման ընթացակարգին, սակայն գնահատող հանձնաժողովի 2024 թվականի օգոստոսի 15-ի 2-րդ նիստի արձանագրության 4-րդ և 5-րդ կետերի համաձայն «Ռուդիկ Աբրոյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտի փաթեթում բացակայել է հավելված 1.1-ը, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 24-ի 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 41-րդ կետի հիմքով «Ռուդիկ Աբրոյան» Ա/Ձ-ին տրվել է մեկ աշխատանքային օր ժամկետ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու նպատակով, սակայն սահմանված ժամանակահատվածում արձանագրված թերությունները չեն շտկվել, ուստի հիմք ընդունելով կարգի 42-րդ կետը վերջինիս հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը կամ մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման

ապահովման գումարները մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ***որոշում եմ.***

1. ԳՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-24/20 ծածկագրով գնման գործընթացի մասնակից «Ռուդիկ Աբրոյան» Ա/Ձ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝

Ստորև համապատասխան տեղեկատվությունը աղյուսակի տեսքով:

Մասնակցի				
Անվանում	ՀՎՀՀ	Գործունեության հասցե	Գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքերը	Գնման ընթացակարգի ծածկագիրը
«Ռուդիկ Աբրոյան» Ա/Ձ	74438738	ՀՀ Գեղարքունիքի մարզ, Վարդենիկ բնակավայր, 2-րդ փողոց, թիվ 4	<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 1-ին մասի, 6-րդ կետի «ա» ենթակետ Խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	ԳՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-24/20

2. Սույն որոշման մեկական օրինակն ուղարկել «Ռուդիկ Աբրոյան» Ա/Ձ- ին և ՀՀ Ֆինանսների նախարարություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2024թ. սեպտեմբերի 04
ք. Մարտունի